ռոյն, և այսպիսի հնարիւք հիմնարկեալ կանգնեաց զայն եկեղեցի մեծ և փառաւոր, և այսպիսի եղանակաւ խափանեցան արդիւնք կալուածոցն Երուսաղէմի։ Եւ հուսկ ուրեմն 'ի կարի թախանձելոյ Զաքարիա Պատրիարքի առաքել գոնէ զհաշիւս նոցին, և նա յղեաց տասնամեայ ելից և մտից զհաշուետուսմարն, և դարձեալ պահանջ Աթոռոյն մնաց անդ։ Բայց յեկեղեցեաց աստի՝ է և այլ եկեղեցի յանուն Ս. Մինասայ կառուցեալ 'ի գերեզմանատան։ Եւ յետոյ էառ Գաբրիել 'ի կառավարութենէ զմի մասն հողաբլրոյն կոչեցեալ Գոմ Էլ Էրմէն, ուր բնակեալ են յառաջագոյն գերեալքն Հայոց։ Էառ նաեւ 'ի Մէհէմմէտ Ալի Փաշայէ՝ ընդարձակ գետին յԱղէքսանդրիա, և խառնեաց 'ի պարտէզն, որոյ Հէօճէթն գրեցաւ յանուն Ս. Յակոբայ։ Եւ յետոյ առ 1000 արտավար (Ֆէդտէն) վարելահող 'ի Կուսակալէն Եգիպտոսի վասն աղքատաց, մնացին անդ և կալուածք Գրիգորի և Պօղոս վարդապետաց։ Յետ աւարտման շինութեան եկեղեցւոյն՝ ժողովուրդք վիճակին կամեցան վարձատրել և պատուել զհոգեւոր հովիւն իւրեանց։ ուստի գրեցին յԵրուսաղէմ առ Պօղոս Եպիսկոպոս և Խորհրդական հարս՝ Պօղոս Պէյ Եուսուֆեան, Ալիքսան և Միքայէլ յարգելիք, և թախանձանօք խնդրէին 'ի նոցանէ տալ զթուղթ վկայութեան Գաբրիել վարդապետի, զի գընացեալ 'ի մայրաքաղաքն Սիս՝ ձեռնադրեսցի Եպիսկոպոս։ Իսկ նոքա ոչ ընկալան առ ժամն զխնդիր նոցա, զի չէր ժամանակ նորա, մանաւանդ առաւել արդիւնաւոր քան զնա էին յԱթոռն արք արժանաւորք այնմ պատուոյ։ Եւ երկնչէին մի գուցէ անկցի երկպառակութիւն 'ի մէջ միաբանաց, և երկրորդ զի Գաբրիել միշտ ապստամբութեամբ վարէր ընդ Աթոռոյն, որոյ վասն առ 'ի շահել զսիրտ ժողովրդոց և իշխանաւորաց տեղւոյն, գրեցին կոնդակ, յորում հրաման տային իբրեւ Առաջնորդի ունել աթոռ եւ դաւազան և թագ Եպիսկոպոսի, այլ նոքա ոչ ընկալան զայն և ոչ զկոնդակն հանին յերեւան։ զի զայդ ամենայն յառաջագոյն Կիրակոս Եպիսկոպոս շնորհեալ էր նմա, եւ ինքն ունէր և կատարէր զամենայնն անթերի, և այսպէս մերժելով մերժեցին զպատճառանս նոցա, և վերստին գրեցին երկիցս և երիցս և ստիպէին զնոսա վաղ ընդ փոյթ առա-